Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

Մարզի խորհրդի նիստը վարում էր ՀՀ Կոտայքի մարզպետ Ռ.Պետրոսյանը

ք.Հրազդան 03.10.2018թ. ժամը 11.00

ՀՐԱՎԻՐՎԱԾ ԷԻՆ՝

-Դ.Գևորգյան-ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարի տեղակալ
-Ն.Ավետյան-ՀՀ ՏԿԶՆ տարածքային ներդրումային քաղաքականության և ենթակառուցվածքների զարգացման վարչության պետ

ՄԱՄՆԱԿՑՈՒՄ ԷԻՆ՝

-Ա.Ավետիսյան- ՀՀ Կոտայքի մարզպետի տեղակալ
-Վ.Վարդանյան- ՀՀ Կոտայքի մարզպետի տեղակալ
-Լ.Պետրոսյան- ՀՀ Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավար
-Մարզպետարանի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներ
-Մարզի խորհրդի անդամ համայնքների ղեկավարներ

Օ Ր Ա Կ Ա Ր Գ՝

1. Սեփական եկամուտների հավաքագրման վիճակը մարզի համայնքներում:
/զեկուցող՝ ՀՀ Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետի պաշտոնակատար Գ.Գույլյան/

2. Մարզի համայնքներում աղբահանության կազմակերպման մասին:
/զեկուցող՝ ՀՀ Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետի տեղակալ Կ. Թումոյան/

3. Մարզի համայնքներում հողային օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ վերահսկողության արդյունքների մասին:
/զեկուցող՝ ՀՀ Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի հողաշինության բաժին-մարզային հողային պետական տեսչության պետ Գ.Ավետիսյան/

4. Այլ հարցեր

ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարի տեղակալ Դ.Գևորգյանը նշեց Կոտայքի մարզում աղբահանության կազմակերպման գործընթացում գրանցված ձեռքբերումների և դրական տեղաշարժի մասին, միաժամանակ կարևորեց հստակ քայլերով կարճ ժամանակահատվածում առկա բազմաթիվ խնդիրների լուծման անհրաժեշտությունը:

ՀՀ ՏԿԶՆ տարածքային ներդրումային քաղաքականության և ենթակառուցվածքների զարգացման վարչության պետ Ն.Ավետյանը ներկայացրեց աղբահանության ծառայությունների մատուցման որակի բարձրացման, իրավաբանական անձանց հետ պայմանագրերի կնքման ուղղությամբ տարվող աշխատանքների արդյունավետության կարևորությունը:

Անդրադարձ կատարվեց նաև համայնքների կողմից ներկայացվող սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիայի ծրագրերին:

Առաջարկվեց համայնքների ղեկավարներին՝

-2018թ. նոյեմբերից ներկայացնել 2019թ. համար նախատեսվող սուբվենցիայի ծրագրային հայտերը՝ հատուկ ուշադրություն դարձնելով համայնքներում առաջնահերթ լուծում պահանջվող խնդիրներին:

ԼՍԵՑԻՆ՝

1. ՀՀ Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետի պաշտոնակատար Գ.Գուլյանի զեկուցումը մարզի համայնքներում սեփական եկամուտների հավաքագրման վիճակի մասին:

Զեկուցումն ընդունվեց ի գիտություն:/Կցվում է/:

Առաջարկվեց համայնքների ղեկավարներին՝

-Ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ համայնքների սեփական եկամուտների հավաքագրման ցուցանիշների բարելավման ուղղությամբ:

-Ճշտել խոշոր ապառքատերերի ցուցակները և ներկայացնել տեղեկատվություն ապառքատերերի նկատմամբ կիրառված գործողությունների վերաբերյալ:

2. ՀՀ Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետի տեղակալ Կ.Թումոյանի զեկուցումը մարզի համայնքներում աղբահանության կազմակերպման մասին:

Զեկուցումն ընդունվեց ի գիտություն:/Կցվում է/:

Առաջարկվեց համայնքների ղեկավարներին՝

-Հետևողական լինել համայնքներում աղբահանության գործընթացի պատշաճ կազմակերպման հարցում:

-Հատուկ ուշադրություն դարձնել աղբահանության վարձավճարների հավաքագրման գործընթացին, մասնավորապես օրենքով սահմանված կարգով իրականացնել իրավաբանական անձանց հետ պայմանագրերի կնքումը:

-Անհրաժեշտության դեպքում կիրառել սահմանված չափով վարչական տույժեր:

-Կազմակերպել աղբերի կուտակումների վայրերում զգուշացնող ցուցանակների տեղադրման գործընթացը:

-Հետևելով Գառնի համայնքի օրինակին՝ վճռական քայլեր ձեռնարկել համայնքների վարչական տարածքներում աղբավայրերի լիկվիդացման ուղղությամբ:

3. ՀՀ Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի հողաշինության բաժին-մարզային հողային պետական տեսչության պետ Գ.Ավետիսյանի զեկուցումը մարզի համայնքներում հողային օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ վերահսկողության արդյունքների մասին:

Զեկուցումն ընդունվեց ի գիտություն:/Կցվում է/:

Առաջարկվեց համայնքների ղեկավարներին՝

-Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի վաճառքի աճուրդները կազմակերպելիս խստագույնս պահպանել Հողային օրենսգրքի 68-րդ հոդվածով սահմանված կետերը:

-Ներկայացնել մանրամասն տեղեկատվություն համայնքներում նորատունկ այգիների վերաբերյալ՝ կցելով համապատասխան տարածքի նշումով անհրաժեշտ քարտեզագրական նյութերը:

Ամփոփելով մարզի խորհրդի նիստը մարզպետ Ռ.Պետրոսյանը առաջարկեց համայնքների ղեկավարներին՝

-Շինթույլտվությունների տրման գործընթացը համապատասխանեցնել կառավարության կողմից սահմանված կարգին:

-Դադարեցնել համայնքային սեփականություն հանդիսացող և խիստ հսկողություն սահմանել քաղաքացիների սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողերի մասնատման գործընթացի նկատմամբ, ինչպես նաև արգելել դրանց վրա ոչ գյուղատնտեսական նշանակության շենքերի և շինությունների կառուցումը և պարիսպապատումը:

-Ակտիվ մասնակցություն ցուցաբերել նոյեմբերի սկզբին մարզում կազմակերպվող մեծ մարզային ծառատունկին:

Խոշոր քաղաքային համայնքների ղեկավարներին՝

-Կազմակերպել բանուկ խաչմերուկներում լուսացույցների կողքին տեսախցիկների տեղադրման գործընթացը:

-Աջակցություն ցուցաբերել Ֆրանկոֆոնիայի գագաթաժողովի շրջանակներում կազմակերպվող միջոցառումներին:

Ռ.ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

03.10.2018թ.

ՄԱՐԶԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՄԱՍԻՆ

Մարզի համայնքներում աղբահեռացման և սանիտարական մաքրման աշխատանքները միշտ էլ գտնվել է մարզպետարանի ուշադրության կենտրոնում, այն ավելի է կարևորվել վերջին մի քանի ամիսների ընթացքում և հատկապես սեպտեմբերի 8-ին համապետական ու սեպտեմբերի 15-ին <<Մաքուր մոլորակ>> շրջանակներում իրականացված միջոցառումներին; Համայնքներում շրջակա միջավայրի պահպանության ուղղությամբ տարվող աշխատանքները թերևս ակտիվացել են, սակայն դրանք բավարար համարել չի կարելի, հաշվի առնելով այն հանգամանքը, որ համայնքների ղեկավարները էլ ավելի շատ ջանքեր պետք է գործադրեն և հետևողականություն դրսևորեն թիվ մեկ խնդրի կարգավորման ուղղությամբ: Ուսումնասիրելով և գնահատելով իրավիճակը գալիս ենք այն եզրահանգման, որ համայնքում սանիտարական մաքրման աշխատանքների վատ կազմակերպումը արդյունք են բյուջեում անբավարար միջոցների տրամադրման, անհրաժեշտ մեքենա-մեխանիզմների և աղբարկղերի բացակայության, ֆիզիկական և իրավաբանական անձանցից աղբահանության գումարների ոչ լիարժեք հավաքագրման, դրա համար կոչված աշխատակիցների ոչ կոմպիտենտ լինելու, բացատրական աշխատանքների թերացման և անհաժեշտության դեպքում համապատասխան / սահմանված/ չափով տույժ-տուգանքների կիրառման / 2018թ. ընթացքում որևէ համայնքի կողմից վարչական տույժի վերաբերյալ տեղեկատվություն չի ներկայացվել /, հատկապես թիրախավորված վայրերում զգուշացնող ցուցանակների տեղադրման հետ: Վերը նշված խնդիրների վերաբերյալ պարբերաբար քննարկումներ են տեղի ունեցել համայնքների ղեկավարների, դրա համար պատասխանատուների մասնակցությամբ և փորձեր են արվել գտնելու հնարավորինս ճիշտ լուծումներ: Չպետք է մոռանալ, որ <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի համաձայն՝ աղբահանության կազմակերպումը համայնքի ղեկավարի պարտադիր լիազորությունն է: Մեկ անգամ ևս կարևորվում է իրավաբանական անձանց հետ աղբահանության պայմանագրերի կնքման գործընթացի կազմակերպումը, որը այսօրվա հրամայականի պահանջն է: Առաջնահերթ տեսադաշտում է եղել միջպետական, հանրապետական, մարզային /տեղական/ ճանապարհների հարող տարածքներում սանիտարական մաքրման աշխատանքների կազմակերպումը, որը ապահովվել է մարզպետարանի, համայնքների և ճանապարհները սպասարկող ընկերությունների փոխհամագործակցման շնորհիվ:

Ոչ բոլոր համայնքներում / հատկապես խոշորացված / բավարար չեն ֆիզիկական և իրավաբանական անձանցից աղբահանության գումարների հավաքագրման գործընթացի կազմակերպումը /այստեղ բարեգործություն անելու միտում չպետք է լինի, քանի որ ծառայություն է մատուցվում /, իրավաբանական անձանց հետ կնքված պայմանագրերի գումարները չպետք է լինեն սիմվոլիկ թվեր, այլ համապատասխանեցվեն ավագանիների կողմից հաստատված սակագներին, անտեսված են մի շարք խոշոր տնտեսվարողներ հատկապես մայրուղիների հարող տարածքներում / Արզնի, Վերին Պտղնի/:

2017թ. ֆիզիկական անձանց հետ աղբահանության պայմանագրերի թիվը եղել է 184 հազ. , 2018թ. պետք է հասցվի 200 հազ. , իրավաբանական անձանց հետ 2017թ. վերջի դրությամբ ավելի քան 4000, տարվա ընթացքում նպատակ էր դրված թիվը ավելացնելու ևս 250-ով ելնելով ռեալ պատկերից, սակայն համայնքներում աշխատանքների թերի կազմակերպումը ցուցանիշների էական ավելացման չի բերել, այսպես Հրազդանում 2017թ. վերջին ցույց է տրվել կնքված 905 պայմանագիր, իսկ ներկա դրությամբ դարձել է 636: Վերը նշված հարցերին լուծում տալու համար անհրաժեշտ դիմել կտրուկ քայլերի և կարճ ժամանակամիջոցում վերջնականորեն վերացնելու առկա բացթողումները:

Գյուղատնտեսության և բնապահպանության վարչության

պետի տեղակալ Կ. Թումոյան

03.10.2018թ.

Մարզի համայնքների բյուջեների սեփական եկամուտների հավաքագրման ընթացքը, մարզի համայնքների խոշոր ապառքատերերի ցուցակները և համայնքների ղեկավարների կողմից կատարվող աշխատանքները ապառքների գանձման ուղղությամբ

Մարզի համայնքների բյուջեների սեփական եկամուտների հավաքագրման կատարողականը բոլոր հարկատեսակների գծով կատարվել է 94.1%-ով: Նախատեսված 2,487,721.9 հազար դրամի դիմաց հավաքագրվել է 2,341,208.4 հազար դրամ: Նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ ավել է հավաքագրվել շուրջ 305,8 միլիոն դրամ:

Սեփական եկամուտների առաջադրանքը 5 հարկատեսակների գծով /հողի հարկ, գույքահարկ, տեղական տուրքեր, պետական տուրքեր, հողի և գույքի վարձակալության վարձավճարներ/ կատարվել է 96.5%-ով: Նախատեսված 1,475,019.8 հազար դրամի դիմաց հավաքագրվել է 1,423,286.7 հազար դրամ:

Առաջադրանքը 5 հարկատեսակների գծով ինն ամսվա կտրվածքով պլանավորվածի համեմատ կատարվել է ոչ լրիվ ծավալով, սակայն՝ համեմատելով նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի հետ, ավել է հավաքագրվել շուրջ 78.7 միլիոն դրամ: Համայնքները եկամուտների հավաքագրման հիմնական բեռը թողել են 4-րդ եռամսյակում՝ հաշվի առնելով բերքահավաքից ակնկալվող եկամուտները:

Չնայած 5 հարկատեսակների առաջադրանքը կատարվել է 96.5%-ով, բայց կան համայնքներ, որ տարբեր հարկատեսակների գծով կատարողականը հեռու է բավարար լինելուց:

Այժմ ներկայացնենք սեփական եկամուտների հավաքագրումը ըստ առանձին հարկատեսակների:

Գույքահարկ- Առաջադրանքը կատարվել է մոտ 96.7%-ով: Նախատեսված 914,761.3 հազար դրամի դիմաց հավաքագրվել է 884,702.4 հազար դրամ:

Գույքահարկի գծով ցածր ցուցանիշներ է արձանագրվել Արգել (42.5%), Ջրվեժ (70.2%), Քարաշամբ (71.6%), Գեղաշեն (79.3%), Սոլակ (74.2%), Գառնի (76.4%), Մայակովսկի (79.1%) և Հրազդան(79.4%) համայնքներում:

Հողի հարկ - Առաջադրանքը կատարվել է 89.3%-ով: Նախատեսված 248,843.3 հազար դրամի դիմաց հավաքագրվել է 222,248.7 հազար դրամ:

Հողի հարկի գծով ցածր ցուցանիշներ է արձանագրվել Մրգաշեն (42.0%), Գեղարդ (44.0%), Քաղսի (51.4%), Պոռշյան (47.5%), Պտղնի (50.4%), Քանաքեռավան(59.6%), Նոր-Արտամետ (52.9%), Քարաշամբ (57.5%) և Արգել (68.1%) համայնքներում:

Հողի հարկի գծով գրեթե բոլոր համայնքներում կուտակվել են մեծ ապառքներ (Հրազդան, Աբովյան, Նոր Հաճն, Բյուրեղավան, Ծաղկաձոր, Եղվարդ), ուստի անհրաժեշտ է ուժեղացնել

աշխատանքները ինչպես պլանային առաջադրանքների կատարմամբ, այնպես էլ ապառքների գանձման ուղղությամբ:

Տեղական տուրքեր- Առաջադրանքը կատարվել է 119.2%-ով: Նախատեսված 111,846.9 հազար դրամի դիմաց հավաքագրվել է 133,366.1 հազար դրամ:

Տեղական տուրքերի գծով ցածր ցուցանիշներ է արձանագրվել Գեղարդ (11.1%), Հացավան (55.6%), Գառնի (66.4%), Ակունք (69.6%) և Արզնի (68.8%) համայնքներում:

Պետական տուրքեր- Առաջադրանքը կատարվել է 108.7%-ով: Նախատեսված 41,780.4 հազար դրամի դիմաց հավաքագրվել է 45,411.3 հազար դրամ:

Պետական տուրքերի գծով ցածր ցուցանիշներ է արձանագրվել Հրազդան (80.1%) և Չարենցավան (84.2%) համայնքներում:

Հողի և գույքի վարձակալական վարձավճարներ- Առաջադրանքը կատարվել է 87.2%-ով: Նախատեսված 157,787.8 հազար դրամի դիմաց հավաքագրվել է 137,558.2 հազար դրամ:

Հողի և գույքի վարձակալական վարձավճարների գծով ցածր կատարողականներ է արձանագրվել Հրազդան, Սոլակ, Գառնի, Գեղարդ Գեղաշեն, Մայակովսկի, Պտղնի, Արգել, Մրգաշեն, Կաթնաղբյուր և Պռոշյան համայնքներում (տոկոսներով արտահայտված կատարողականը տատանվում է 17.8-65.1%):

Վարձավճարների հավաքագրումը նույնպես պարտադիր պայման է, քանի որ դրանց գումարների պլանավորումը բյուջեում կատարվել է նախապես կնքված և գործող պայմանագրերի առկայության պայմաններում:

Աղբահանության վճարներ- Առաջադրանքը կատարվել է 88.1%-ով: Նախատեսված 374,599.9 հազար դրամի դիմաց հավաքագրվել է 329,981.3 հազար դրամ:

Աղբահանության վճարների գծով մարզպետարանը համայնքների համապատասխան աշխատակիցների հետ 2018 թվականի բյուջեն կազմելու ժամանակ մեծ ծավալի աշխատանքներ են կատարել բյուջեում նշված գումարների արտացոլումը ավելի իրատեսական դարձնելու և նշված գումարների գանձումը ամբողջությամբ իրականացնելու նպատակով:

Չնայած վերը նշվածին կան մի շարք համայնքներ, որտեղ առաջադրանքի կատարողականը հեռու է բավարար լինելուց: Դրանք են Քաղսի, Գառնի, Արամուս, Կաթնաղբյուր, Ողջաբերդ, Պտղնի, Լեռնանիստ, Արգել, Գետամեջ համայնքները (տոկոսներով արտահայտված կատարողականը տատանվում է 20.5-42.9%), ինչը բավականին ցածր է:

Առաջարկվում է մարզի համայնքներին միջոցներ ձեռնարկել սեփական եկամուտների հավաքագրման ուղղությամբ և մինչև տարեվերջ սեփական եկամուտների հավաքագրումը բոլոր հարկատեսակների գծով հասցնել առավելագույնի:

Տեղեկացնում եմ նաև, որ ս/թ սեպտեմբեր ամսին համապատասխան գրություններ են ուղարկվել մարզի համայնքներին՝ բոլոր հնարավոր միջոցները ձեռնարկելու սեփական եկամուտների և դրանց գծով առաջացած ապառքների հավաքագրման ուղղությամբ, ինչպես նաև դրանց վերաբերյալ պարզաբանումներ ստանալու կապակցությամբ:

2018 թվականի հոկտեմբերի 1- ի դրությամբ 500.0 հազար դրամ և ավել խոշոր ապառք ունեցողների պարտքը գույքահարկի գծով հաշվի առած տույժերն ու տուգանքները կազմել են 357,116.0 հազար դրամ, իսկ հողի հարկի խոշոր ապառքատերերի ապառքի գումարը կազմում է 82,459.4 հազար դրամ:

Հողի և գույքի վարձակալական վարձավճարների խոշոր ապառքատերերի պարտքը կազմում է 60.8 միլիոն դրամ:

Համայնքների կողմից ըստ պարզաբանումների որոշակի աշխատանքներեն կատարվում ապառքների գանձման ուղղությամբ, կազմվել են պարտքերի մարման ժամանակացույց, ապառքատերերը պարբերաբար ծանուցվում են իրենց պարտքերի վերաբերյալ: Ապառքատերերի մի մասը բացակայում են հանրապետությունից, որոշ գործեր դատական վարույթում են, կան սնանկ ճանաչված ապառքատեր կազմակերպություններ:

Գույքահարկի գծով խոշոր ապառքներ են կուտակվել Առինջ 18.5 մլն դրամ, Եղվարդ 47.2 մլն դրամ, Ծաղկաձոր 58.9 մլն դրամ, Բյուրեղավան 27.8 մլն դրամ, Աբովյան 51.4 մլն դրամ, Նոր Հաճն 12.4 մլն դրամ, Հրազդան 27.1 մլն դրամ, Չարենցավան 15.5 մլն դրամ, Արզնի 14.9 մլն դրամ և Ջրվեժ 47.9 մլն դրամ:

Հողի հարկի գծով խոշոր ապառքատերերի ապառքի գումարը ըստ համայնքների կազմում է Եղվարդ 23.5 մլն դրամ, Ծաղկաձոր 12.1 մլն դրամ, Աբովյան 3.1 մլն դրամ, Բյուրեղավան 12.0 մլն դրամ, Նոր Հաճն 8.1 մլն դրամ և Հրազդան 14.2 մլն դրամ:

Հողի և գույքի վարձակալական վարձավճարների խոշոր ապառքատերերի ապառքը ըստ համայնքների հետևյալն է:

Եղվարդ 20.2 մլն դրամ, Գառնի 12.7 մլն դրամ, Հրազդան 7.1 մլն դրամ, Չարենցավան 3.9 մլն դրամ, Նոր Գեղի 6.5 մլն դրամ և Աբովյան 4.9 մլն դրամ:

Առաջարկվում է մարզի համայնքների ղեկավարներին մեկ անգամ ևս ճշգրտել խոշոր ապառքատերերի ցուցակները և հաջորդ ամսվա սկզբին հաշվետվություն ներկայացնելու ժամանակ ծանոթություն տողում ներկայացնել տեղեկատվություն ապառքատերերի նկատմամբ կիրառված գործողությունների վերաբերյալ:

Ֆինանսական և սոց.տնտ.
զարգացման վարչության պետ՝ **Գ.Գուլյան**

Մարզի համայնքներում հողային օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ վերահսկողության արդյունքների մասին

03.10.2018թ.

1. 2018թ. փետրվար-սեպտեմբեր ժամանակահատվածում վարչական վերահսկողություն իրականացնող մարզային հանձնաժողովի կազմում ղեկավարվելով Հողային օրենսգրքի 42-րդ հոդվածի և <<Հողերի օգտագործման և պահպանման նկատմամբ վերահսկողության մասին>> ՀՀ օրենքի պահանջներով մեր կողմից ընթացիկ ստուգումներ են իրականացվել մարզի Լեռնանիստ, Առինջ, Պառոյան, Նոր Հաճն, Կամարիս, Քաղսի, Մրգաշեն, Գեղարդ, Գեղաշեն, Նոր Արտամետ, Հրազդան, Պտղնի, Քասախ և Գետարգել համայնքներում:

Ստուգումներից պարզվել է, որ ի հայտ եկած խախտումներն ու բացթողումները հիմնականում վերաբերում են հողերի օտարման աճուրդների անցկացման կարգին՝ մասնավորապես խախտվում են ՀՀ Հողային օրենսգրքի 68-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջը՝ թերի են ներկայացվում աճուրդի վերաբերյալ տրվող հայտարարություններում օտարվող հողամասերի վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվությունը:

Ստուգված բոլոր համայնքներում խախտվել են ՀՀ կառավարության 2001թ. ապրիլի 12-ի թիվ 286 որոշմամբ հաստատված կարգի 23-րդ կետի <<բ>> և <<գ>> ենթակետի պահանջները՝ քաղաքաշինական գործունեության համար նախատեսված հողամասերի աճուրդային փաթեթներում բացակայում են համապատասխան ճարտարապետա-հատակագծային առաջադրանքները և 23[1] կետի պահանջը՝ չի պահպանվում գյուղատնտեսական նշանակության հողամասերի աճուրդների դեպքում 1 լոտով օտարվող հողամասի նվազագույն չափը ՝ այսինքն աճուրդի են ներկայացվում տվյալ համայնքում սեփականաշնորհված 1 հողաբաժնի չափից պակաս հողամասեր: Դրանք են Պտղնի,Պառոյան, Կամարիս, Մրգաշեն, Գեղաշեն, Հրազդան համայնքները:

2. Ցանկանում եմ ևս մեկ անգամ անդրադառնալ վերջին շրջանում տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ընդունված իրավական ակտերում հանդիպող քաղաքացիներին կամ իրավաբանական անձանց սեփականության իրավունքով պատկանող կառուցապատված հողամասերի, ինչպես նաև գյուղատնտեսական նշանակության հողամասերի **ընդլայման** նպատակով հողամասերի հատկացմանն առընչվող թերություններին: Նշված գործընթացը կարգավորվում է ՀՀ կառավարության 26.05.2016թ. թիվ 550-Ն որոշմամբ սահմանված չափորոշիչների հիման վրա: Հարցին առընչվող հիմնական թերությունը նշված կառավարության որոշման 1 կետի 5-րդ ենթակետով սահմանված դրույթի խախտում է: Խնդիրը վերաբերում է այն դեպքին, երբ օտարվող հողամասը սահմանակից է մեկից ավել սուբյեկտներին պատկանող հողամասերին: Այս դեպքում պարտադիր պայման է սահմանակից այլ հողամասերի սեփականատերերին պատշաճ իրազեկումը, որը տալուց երկշաբաթյա ժամկետում եթե ցանկություն չի հայտնվել այլ սեփականատերերի կողմից ձեռք բերելու այդ հողակտորը՝ այն ենթակա է օտարման համապատասխան դիմում ներկայացրած հողամասի սեփականատիրոջը:

ա/ մինչև ավագանու քննարկմանը ներկայացնելը օտարման կամ օգտագործման /վարձակալության/ ներկայացվող հողամասերի համար կազմված նյութերը նախապես քննարկել մարզպետարանի համապատասխան ստորաբաժանումների հետ.

բ/ մամուլով և զանգվածային լրատվության այլ միջոցներով աճուրդի անցկացումից առաջ տրվող հայտարարություններում խստագույն պահպանել հողային օրենսգրքի 68-րդ հոդվածով սահմանված բոլոր կետերը, համաձայն որի՝

. Կազմակերպիչն աճուրդի անցկացումից մեկ ամիս առաջ մամուլով և զանգվածային լրատվության այլ միջոցներով հրապարակում է սակարկությունների անցկացման տեղը, օրը, ժամը, հողամասի գտնվելու վայրը, ծածկագիրը, մեկնարկային գինը, օգտագործման նպատակը, չափերը, ճանապարհների, ջրատարի, կոյուղու, էլեկտրահաղորդման գծերի, գազատարի առկայության մասին տվյալները (գյուղատնտեսական հողամասերի դեպքում՝ նաև որակական հատկանիշները), ինչպես նաև տվյալ հողամասի նկատմամբ սահմանափակումների (ներառյալ՝ սերվիտուտների) առկայությունը:

Գ/ մեկ անգամ ևս տեղեկացնում եմ, որ Հողային օրենսգրքի 68-րդ հոդվածի 6-րդ մասի առաջին պարբերության՝ «Աճուրդն անցկացվում է *փակ*, որին մասնակցում են միայն գրանցված անձինք, կազմակերպիչը և արձանագրողը» դրույթն այն մասով, որով իրավակիրառական պրակտիկայում դրան տրված մեկնաբանությամբ արգելափակում է պետության և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի վաճառքի աճուրդներին սահմանված կարգով ներկա գտնվելու և աճուրդի ընթացքը դիտարկելու ցանկություն հայտնած անձանց, այդ թվում՝ իրենց կանոնադրական պարտականությունը կատարող կազմակերպությունների ու զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչներին, ճանաչվել է ՀՀ Սահմանադրության 42-րդ, 78-րդ և 79-րդ հոդվածներին հակասող և անվավեր 30.01.18 ՍԴՈ-1399 որոշմամբ:)

3. Տեղեկացնեմ նաև, որ համաձայն հողային օրենսգրքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և հիմք ընդունելով ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարի 24.09.2018թ. թիվ 01/15.2/7511-18 հանձնարարականը ՀՀ Կոտայքի մարզպետի 27.10.2018թ. թիվ 285-Ա որոշմամբ ստեղծվել է աշխատանքային խումբ ՀՀ Կոտայքի մարզում ստվերային այգիների մասով ուսումնասիրություններ կատարելու նպատակով:

Այս առումով որպես աշխատանքային խմբի ղեկավար առաջարկում եմ համապատասխան համայնքների ղեկավարներին նախապատրաստել մանրամասն տեղեկատվություն նշված /նորաստեղծ/ այգիների վերաբերյալ՝ դրանց կցելով համապատասխան տարածքի նշումով անրաժեշտ քարտեզագրական նյութերը:

Հողաշինության և հողօգտագործման բաժնի պետ *Գ.Ավետիսյան*